

Էջմիածին քաղաքի և հարակից 4 գյուղերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծային և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում

Նախնական բնապահպանական գննություն և դասակարգում

Ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքների իրականացումը.

Բնակավայր	Արտաքին ջրատար (կմ)	Ներքին ցանց (կմ)	Ջրամատակարարման հոր և փականային հանգույց (հատ)	Անհատական տների ջրաչափական հանգույց (հատ)	Անհատական տների մուտքագիծ (կմ)	Հրշեջ հիդրանտ (հատ)
Էջմիածին	-	33.84	233	(1695+80)*	(13.56+6.05)*	20
Զվարթնոց թաղամաս	-	6.4	233	(800+45)*	(13.56+2.2)*	5

*- բազմաբնակարան շենքերի մուտքագծեր

Ծրագրով նախատեսվում է նաև Էջմիածին քաղաքի ՕԿՁ-ների տարածքի սանիտարական գոտու կառուցում, ջրամբարների, փականային հանգույցների վերանորոգում, ջրաչափական հանգույցների վերակառուցում, ցանցի սնման գծերի վերադասավորության իրականացում: Ինչպես նաև Բազմադրյուր և Ղազարավանի հորատանցքերից Էջմիածին քաղաք սնուցող ջրատարի վթարային հատվածների վերակառուցում L=100մ, DN600 պողպատե խողովակով, Բազմադրյուր կապտածներից գյուղական համայնքների սնող ջրատարի վթարային հատվածների վերակառուցում L=20մ, DN400 և L=20մ, DN300 պողպատե խողովակներով, Ղազարավան կապտածներից Այգեշատ, Դաշտ Շահումյան գյուղերը սնող ջրատարի վթարային հատվածների վերակառուցում L=100մ, DN500, Ղազարավան կապտածներից Նորակերտ գյուղը սնող d=270մմ թուջե ջրատարի փոխարինում de250 պոլիէթիլենե խողովակով L=2300մ և Ղազարավանի աղբյուրներից եկող ջրատարի ջրամատակարարման հորում DN 500 թուջե փականի փոխարինում նորով:

(Ա) Ազդեցության բացահայտում

<p>Արդյո՞ք ծրագիրը շոշափելի ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա:</p>	<p>Ծրագիրը որևէ անդառնալի ազդեցություն չունի շրջակա միջավայրի վրա: Բոլոր բացասական ազդեցություններն ի հայտ կգան շինարարության փուլում և կկրեն ժամանակավոր բնույթ: Բացասական ազդեցությունները կմեղմացվեն ՇՄԿՄՊ-ում ներառված մեղմացնող միջոցառումների իրականացման արդյունքում:</p>
<p>Որո՞նք են ծրագրի նշանակալի դրական և բացասական բնապահպանական ազդեցությունները</p>	<p>Ծրագրի հիմնական դրական բնապահպանական ազդեցությունը ջրային ռեսուրսների պահպանությունն ու արդյունավետ օգտագործումն է, ջրաղբյուրների պաշտպանությունը ռոդոդոմներից և բնական այլ աղետներից: Նախատեսվող միջոցառումներով կապահովվեն ջրաղբյուրների երկարամյա անխափան աշխատանքը:</p> <p>Հոսակորուստների վերացումը հնարավորություն կտա կանխել գրունտներում հնարավոր սուֆոզիոն երևույթները, որոնք հղի են անկանխատեսելի հետևանքներով: Բազմաբնակարանային շենքերի հիմքերը և հիմնակատակերը կպաշտպանվեն ռոդոդոմներից և գրունտային ջրերի մակարդակների անհարկի բարձրացումներից:</p> <p>Ակնկալվող բացասական բնապահպանական ազդեցություններն, ամենայն հավանականությամբ, կլինեն կարճաժամկետ և բնակավայրերում դրանք կարող են արտահայտվել աղմուկի, փոշու, տատանումների շահագործվող շինարարական մեքենաներից արտանետումների, շինարարական թափոնների առաջացման և կուտակման տեսքով:</p> <p>Ջրատարների վերկառուցման ու կառուցման տարածքներում հնարավոր է հողի, ջրային ռեսուրսների և օդի աղտոտում: Քաղաքային միջավայրում խրամուղիների, դրանցից հանված գրունտների առկայությունը կառաջացնի որոշակի դժվարություններ քաղաքային կյանքի առօրիայի վրա: Այս ազդեցությունները մեղմացնելու նպատակով, նախատեսվող միջոցառումները էապես կմեղմացնեն այդ խոչընդոտները:</p>
<p>Արդյո՞ք ծրագիրը շոշափելի ազդեցություն ունի տեղական կամ ազդակիր համայնքների վրա:</p>	<p>Ծրագիրը դրական մեծ ազդեցություն կունենա 4 համայնքի 65816 բնակչության վրա, որի արդյունքում կբարելավվի նրանց սոցիալական և առողջապահական վիճակը: Ծրագիրը կբարելավի հատկապես կանանց՝ որպես կենցաղային հիմնական ջրօգտագործողներ, կյանքի պայմանները: Ծրագրում ընդգրկված բնակավայրերում բացակայում են ազգային փոքրամասնությունները, սակայն էջմիածին քաղաքում կան փախստականների թաղամասեր և կառուցապատված բնակատեղեր: Ծրագրի իրականացումը այդ</p>

	<p>բնակավայրերում հնարավորություն կտա բարելավելու նաև փախստականների՝ որպես առավել խոցելի խավերի կյանքի պայմանները:</p> <p>Ծրագրի բացասական ազդեցությունները կարճաժամկետ են՝ կապված շինարարական աշխատանքների իրականացման հետ և ունեն լուրջ բնույթ /բնակչության տեղաշարժումները սահմանափակվում են շինհրապարակների պատճառով/: Դրանք են փոշին, աղմուկը, փորված խրամուղիները, ճանապարհների խաթարումը և այլն:</p> <p>Ծրագիրը չի պահանջում նոր հողհատկացումներ և չի ակնկալվում բնակչության տարաբնակեցում:</p>
<p>Ի՞նչ ազդեցություն ունի ծրագիրը մարդու առողջության վրա:</p>	<p>Ծրագիրը դրական ազդեցություն կունենա նաև բնակավայրերի բնակչության առողջության վրա, քանի որ դրա արդյունքում կբացառվի կեղտաջրերի, ջրաբքիացման ու ռոռգման ջրերի խառնումը խմելու ջրի հետ, քանի որ վերակառուցված ջրագծերում մշտապես կպահապանվեն ավելցուկային ճնշումներ, որոնք հնարավորություն չեն տա արտաքին կեղտաջրերի ոչ ճնշումային հոսքերին մուտք գործելու ջրատարներ: Կնվազի խմելու ջրի աղտոտման ռիսկը, կկանխվի և կբացառվի վարակիչ հիվանդությունների հարուցիչների ներթափանցումը դեպի խմելու ջրամատակարարման համակարգ, կավելանա բնակչության ջրամատակարարման տևողությունը, ինչի արդյունքում կբարելավվի նրանց սանիտարա-հիգիենիկ պայմանները:</p> <p>Աննշան բացասական ազդեցությունները կապված են շինարարության ընթացքում փոշու, արտանետումների, աղմուկի և տատանումների հետ:</p>

(Բ) ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

<p>Ծրագրի նախագծի ի՞նչ այլընտրանքներ են քննարկվել և ինչ մեղմացման միջոցառումներ են առաջարկվում:</p>	<p>Այս ծրագիրը հանդիսանում է 2007թ.-ին ՀԲ-ի կողմից ֆինանսավորված “Էջմիածին քաղաքի ՋևՋ համակարգերի բարելավում” և 2008-2011թթ. ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորված “ՀՀ ՋևՋ համակարգերի բարելավում” ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների օրգանական շարունակությունը, որոնք այդ ծրագրերով չեն իրականացվել սահմանափակ ֆինանսական հնարավորությունների պատճառով:</p> <p>Նախնական ուսումնասիրությունների արդյունքում Խորհրդատուն բացահայտել է ծրագրում ընդգրված բնակավայրերի ջրամատակարարման համակարգի թերությունները և ներկայացրել պահանջվող աշխատանքների ծավալները: Այնուհետև Պատվիրատուի հետ քննարկումից հետո Խորհրդատուն մշակել է</p>
---	---

աշխատանքների իրականացման համար նախնական նախագիծ և կատարել է այդ աշխատանքների իրականացման ներդրումային գնահատում:

Քանի որ ծրագիրն ուղղված է էջմիածին քաղաքում և տարածաշրջանի 4 գյուղական համայնքներում ջրամատակարարման արտաքին համակարգի և ներքին ցանցի բարելավմանը և ներքին ցանցը բնակավայրերում վերականգնման ու վերանորոգման կարիք ունի, ապա ներքին ցանցում իրականացվելիք աշխատանքների այլընտրանքային տարբերակները քննարկվել են ֆինանսական ընունելիության տեսակետից միայն: Ջրամատակարարման արտաքին համակարգերի տեխնիկական վիճակի վերլուծությունից կազմված եզրակացության հիման վրա որոշվել են վերակառուցման ենթակա ջրատարերի, բաժանարար հորերի, նրանցում առկա հիդրոմեխանիկական սարքավորումների, ջրաչափական հորերի, նրանցում մոնտաժված սարքավորումների փոխարինման տարբերակները: Ելնելով ջրի արդյունավետ բաշխման ու օգտագործման, ապօրինի ջրօգտագործումները կանխելու անհարաժեշտությունից, ինչպես նաև ջրի արդարացի բաշխման սկզբունքից, ընտրվել է տարբերակ, որն առաջարկում է նոր ջրատարներ կառուցել Շահումյանի ՕԿՁ-ի տարածքում, ապամոնտաժել հին ջագձերի որոշակի հատվածներ, վերանորոգել ջրամբարների մտոցները, օդի քամիչները, ջրաբշխական հորերը, ինչպես նաև կառուցել նոր ջրաչափական հանգույցներ: Դրանցում մշտապես իրականացվող ջրաչափությունը հնարավորություն կտա վերահսկելու վերակառուցված ցանցում ջրի բաշխման գորընթացը:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում ի հայտ կգան շինարարության փուլում, որը կարող են հեշտությամբ մեղմացվել շինարարական աշխատանքների ճիշտ կազմակերպման արդյունքում:

1. Բնակավայրերում **բաշխիչ ցանցի** վերկառուցման աշխատանքների իրականացման ժամանակ բնական լանդշաֆտների, մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններ չեն լինի: Հիմնական բացասական ազդեցությունները կարտահայտվեն օդի և շրջակա միջավայրի աղտոտմամբ, բնակչությանը հասցրած անհանգստությամբ (աղմուկ, փոշի, տատանումներ, ճանապարհների խաթարում, խրամուղիների անվտանգություն և այլն), ինչը կկրի ժամանակավոր բնույթ:

Այս ամեն ազդեցությունները կանխելու, նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է իրականացնել ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ:

1.1. Օդի ժամանակավոր աղտոտում, փոշու առաջացում

- Փոշիացող շինանյութերի տեղափախման ժամանակ փակ/ծածկված բեռնատարների օգտագործում,
- Բնակավայրերում շինարարական տարածքի ջրում,
- Փոշու ժամանակ բնավորներին անհրաժեշտ պաշտպանիչ հարմարանքներով (շնչադիմակով) ապահովում:

1.2. Շրջակա միջավայրի աղտոտում շինարարական ու կենցաղային թափոններով:

- Շինարարական հրապարակի ճիշտ կազմակերպում,
- Շինարարության ընթացքում և ավարտին շինարարակն ու կենցաղային աղվի պարբերաբար հեռացում և տեղադրում ըստ սահմանված կարգի՝ այդ նպատակով հատկացված կուտակման վայրերում:

1.3. Շրջակա միջավայրի աղտոտում վառելանյութերով ու քսայուղերով:

- Վառելանյութերի ու քսայուղերի պահեստավորում մեկուսացված մակերեսների վրա,
- Օգտագործված քսայուղերի հավաքման համար հատուկ տարողությունների նախատեսում:

1.4. Շրջակա միջավայրի աղտոտում աղմուկով ու տատանումներով:

- Աղմկահարույց մեքենաներ օգտագործելուց խուսափում, խլացուցիչների տեղադրում,
- Շինարարական աշխատանքների կիրականացում աշխատանքային ժամերին. Հակառակ դեպքում ըստ սահմանված կարգի խլացուցիչների տեղադրում,
- Շինարարական սարքավորումների վիճակի կանոնավոր ստուգում:

1.5. Բնակչությանը հասցվող անհանգստություն

- Շինարարական աշխատանքների վերաբերյալ բնակչության իրազեկում,
- Փորված խրամուղիների վրա կամրջակների, անհրաժեշտ տեղերում ճանապարհային նշանների ու արգելաժապավենների տեղադրում, անհրաժեշտության դեպքում շրջանցի կազմակերպում,
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո սեղմ ժամկետներում վնասված մասերեսների վերականգնում,
- Ջրագծերի խրամուղիները, ջրաչափական ու կարգավորիչ հանգույցների համար փոստրակները բաց

	<p>թողնելու ժամանակի կրճատում:</p> <p>2. Ջրատարների վերանորոգման և կառուցման ժամանակ, բացի վերը նշված ազդեցություններից ու մեղմացնող միջոցառումներից հնարավոր է նաև հողի կողային էրոզիա և հողատարում, ինչպես նաև հողային ու ջրային ռեսուրսների աղտոտում քլորով, որոնց կանխման համար անհրաժեշտ իրականացնել հետևյալ միջոցառումները.</p> <p>2.1. Հողի կողային էրոզիա և հողատարում</p> <ul style="list-style-type: none"> • Հողաբուսական շերտի հեռացում առանձնացված տարածքներ և դրա վերականգնում շին. աշխատանքների ավարտից հետո: • Ջրատարների անցկացման թեք տեղանքում թեքությունները պահպանող միջոցառումների իրականացում, • Ջրատարների խրամուղիները բաց թողնելու ժամանակի կրճատում: <p>2.2. Հողային ու ջրային ռեսուրսների աղտոտում քլորով</p> <ul style="list-style-type: none"> • Խողովակների լվացումից ու ախտահանումից հետո քլորաջրի արտահոսքի ապահովում ըստ ՍԹԱ-ի (ՀՀ Բնապահպանության նախարարի հրաման N 464, 10 դեկտեմբերի 2003թ. “Մեթոդիկա ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի”). <p>3. ՕԿՁ-ների և նրա կառուցվածքների վերակառուցման ժամանակ վերը նշված բոլոր ազդեցություններին գումարվում են նաև սանիտարական գոտու աղտոտումը, որը կանխելու համար անհրաժեշտ իրականացնել հետևյալ միջոցառումների շարքը.</p> <ul style="list-style-type: none"> • Սանիտարական գոտու տարածքի աղտոտման բացառում վառելայնություններով ու քսայուղերով, • Շինարարական ու կենցաղային աղբի անհապաղ հեռացում, շինհրապարակի մաքրում, • Վնասված լանդշաֆտների վերականգնում, • Հողի ռեկուլտիվացիա, • Սանիտարական գոտու ցանկապատերի տեղադրում այնպիսի բարձրությամբ, որ հնարավոր լինի մանր կենդանիների մուտքը պահպանվող տարածք՝ պահպանելով տեղի կենսաբազմազանությունը:
Նախորդ նմանատիպ ծրագրերից ի՞նչ դասեր են	Նմանատիպ նախորդ ծրագրերի փորձը ցույց է տալիս, որ Շրջակա միջավայրի կառավարման պլանը ավելի հստակորեն կիրականացվի և պլանում տեղ գտած միջոցառումների իրականացումը ավելի լավ կվերահսկվի,

<p>արդեն ներառված սույն ծրագրի նախագծում:</p>	<p>եթե շինարարը այն ներառի իր աշխատանքային ծավալներում և գնահատի դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:</p>
<p>Արդյո՞ք շահագրգիռ համայնքները ներգրավված եղել են և նրանց շահերը, գիտելիքները համարժեքորեն հաշվի են առնվել ծրագրի նախապատրաստման մեջ:</p>	<p>Ծրագրի նախապատրաստական փուլում Խորհրդատու կազմակերպության մասնագետները հանդիպումներ են ունեցել Էջմիածին քաղաքի քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցների, ինչպես նաև Այգեշար, Դաշտ, Շահումյան և Նորակերտ գյուղերի գյուղապետերի ու գյուղապետարանի աշխատակիցների, ՀայԶԿ ՓԲԸ-ի Հարավ-Արևմտյան մասնաճյուղի Էջմիածին տեղամասի աշխատակիցների, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների ու անհատների հետ: Նրանք տեղեկացրել են իրականացվող ծրագրի վերաբերյալ, քննարկել մանրամասները և ստացել շահառու համայնքների դրական արձագանքը: Նախնական նախագծի մշակման ժամանակ հաշվի են առնվել նաև շահառուների դիտողություններն ու առաջարկությունները :</p> <p>Ծրագրի աշխատանքային նախագծի ժամանակ մշակված ՇՄԿՄՊ-ի նախնական տարբերակը մատչելի կդարձվի Էջմիածին քաղաքի և 4 գյուղական բնակավայրերի բնակչության համար: Դրա համար համայնքներում կկազմակերպվեն հասարակական 3 հանդիպում (Էջմիածին քաղաքում և Շահումյան և Նորակերտ գյուղերում) , որին կմասնակցեն հնարավորինս շատ թվով շահառուներ և ջրօգտագործողներ՝ ծրագրում ընդգրկված բնակավայրերից:</p> <p>ՇՄԿՄՊ-ի վերջնական տարբերակում հաշվի կառնվեն հասարակական հանդիպումների մասնակիցների կողմից արված լրացումներն ու դիտողությունները:</p>

Ընտրված ծրագրի ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման տարածքում բնական ու սոցիալական միջավայրի զգայուն բաղադրիչներ	Այո / Ոչ	Զգալի պոտենցիալ ազդեցություն/բարձր ռիսկ	Ցածր պոտենցիալ ազդեցություն/ցածր ռիսկ
Բնական միջավայր և խոցելի էկոհամակարգեր	Ոչ		Ուժեղ ձևափոխված քաղաքային կամ գյուղական լանդշաֆտ, աղուտներ
Մակերևութային ջրային օբյեկտներ	Ոչ		Հրազդան գետը, որը մեծ արժեք ունի որպես ջրային էկոհամակարգ և կենսաբազմազանության համար Ոռոգման և դրենաժային համակարգեր, որոնք մեծ արժեք են ներկայացնում տեղական համայնքների համար
Ստորերկրյա ջրադրյուրներ	Ոչ		Ստորերկրյա և գրունտային ջրերի բարձր մակարդակ
Արժեքավոր լանդշաֆտներ	Ոչ		Ուժեղ ձևափոխված քաղաքային կամ գյուղական լանդշաֆտ, աղուտներ, պտղատու այգիներ
Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ	Ոչ		Մշակութային ռեսուրսներ չկան
Բնակավայրեր	Այո		8 ազդակիր տնտեսություններ, ֆիզիկական տեղաբաշխման անհրաժեշտություն չկա, նոր հողհատկացման կարիք չկա
Երկրաբանական վտանգներ. ուժեղ էրոզիա, սողանք, հեղեղում	Ոչ		Գրանցված չէ

Եթե , հիմնվելով վերոհիշյալ գնահատման չափանիշներից որևէ մեկի վրա, համարվում է, որ ենթաձրագիրը բարձր ռիսկ ունի, ապա այն համարվում է բարձր ռիսկային ենթաձրագիր: Պետք է իրականացվի բնապահպանական վերանայում և բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլանի մշակում:

Եթե , հիմնվելով վերոհիշյալ գնահատման չափանիշներից որևէ մեկի վրա, համարվում է, որ ենթաձրագիրը ցածր ռիսկ ունի, ապա այն համարվում է ցածր ռիսկային ենթաձրագիր, և բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլանի մշակումը բավարար է: